2022, sp1, 36-49 *Միջազգային հարաբերություններ*
https://doi.org/10.46991/BYSU:D/2022.sp1.036

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԳԱԶԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԸ ԵՎ ԱՄՆ-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ*

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Սույն հոդվածը վերլուծում է ԱՄՆ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասում «Հարավային գազային միջանցք» նախագծի իրականացման համատեքստում: 1991 թվականին Խորհրդային Միության փլուզումից ի վեր էներգետիկ աշխարհաքաղաքականությունը եղել է Հարավային Կովկասում ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականությունը ձևավորող կարևոր գործոններից մեկը: ԱՄՆ-ի ռազմավարական նպատակն էր հեշտացնել կասպյան նավթի և գազի տեղափոխումը դեպի եվրոպական շուկաներ՝ շրջանցելով Ռուսաստանը: ԱՄՆ-ը կենսական դեր է խաղացել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի կառուցման գործում: 2000-ականների կեսերից ԱՄՆ-ը զգալի ջանքեր է գործադրել «Հարավային գազային միջանցքի» գործարկման համար, որը նախատեսում էր ադրբեջանական գազի փոխադրում եվրոպական շուկաներ Տրանսանատոլիական և Տրանսադրիատիկ գազամուղներով:

Հարավային գազային միջանցքը գործարկվել է 2020 թվականի դեկտեմբերի վերջին և տարեկան շուրջ 10 միլիարդ խորանարդ մետր գազ է մատակարարում Իտալիային, Բուլղարիային և Հունաստանին: Թեև Ադրբեջանը չունի գազի բավարար պաշարներ՝ Եվրոպայի էներգետիկ աշխարհաքաղաքականությունում որոշիչ դերակատարության համար, ԱՄՆ-ը դիտարկում է Հարավային գազային միջանցքի նախագիծը որպես զգալի ներդրում դեպի Եվրոպա էներգիայի այլընտրանքային փոխադրման ուղիների ստեղծման գործում:

Բանալի բառեր – *Հարավային Կովկաս, Հարավային գազային միջանցք, ԱՄՆ, Եվրամիություն, Ադրբեջան, Հայաստան, Թուրքիա, Ռուսաստան, աշխարհաքաղաքականություն, տարածաշրջանային անվտանգություն, էներգետիկ ռազմավարություն*

ԱՄՆ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1990-ական թվականներին

ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասը, ի թիվս հետ-

---

* Սույն հոդվածը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության դրամաշնորհի շրջանակում: Այստեղ արտահայտված են հեղինակի դիրքորոշումները, որոնց համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշումներին պարտադիր չէ:

This [article/publication] was funded by a grant from the United States Department of State. The opinions, findings and conclusions stated herein are those of the author[s] and do not necessarily reflect those of the United States Department of State.

խորհրդային այլ տարածաշրջանների, հայտնվեց ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ռադարում: Աշխարհի՝ երկբևեռից միաբևեռ անցման փուլում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմքում դրվեց այսպես կոչված «լիբերալ հեգեմոնիայի» ռազմավարությունը: Այն ենթադրում էր ԱՄՆ-ի կողմից ակտիվ արտաքին քաղաքականության իրականացում՝ աշխարհի տարբեր հատվածներում լիբերալ ժողովրդավարության տարածման նպատակով, ընդ որում՝ ինչպես «փափուկ», այնպես էլ «կոշտ» ուժի կիրառման մեթոդներով: Արդեն 1992 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսն ընդունեց «Ազատության աջակցության ակտը», որի հիմնական նպատակը նախկին ԽՍՀՄ նորանկախ հանրապետություններին օժանդակություն տրամադրելն էր: Ընդհանրապես, հետխորհրդային տարածաշրջանը էական դեր էր խաղում «ժողովրդավարության տարածման» ԱՄՆ-ի ռազմավարության մեջ: 1993 թ. Եվրամիության ստեղծումից հետո «լիբերալ հեգեմոնիայի» ռազմավարության մեջ կարևորվեց Եվրամիության և ՆԱՏՕ-ի ընդլայնումը՝ որպես ժողովրդավարության տարածման և Արևելյան Եվրոպայում ու հետխորհրդային տարածաշրջանում երկարաժամկետ կայունության հաստատման միջոց: 1993 թ. սեպտեմբերի 27-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ունեցած ելույթում ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը առաջ քաշեց «ժողովրդավարական ընդլայնման» հայեցակարգը[1]:

1995 թ. փետրվարին ընդունված ԱՄՆ-ի ազգային անվտանգության ռազմավարության մեջ առանձնահատուկ շեշտվում էր նախկին խորհրդային հանրապետություններում, առաջին հերթին՝ Ռուսաստանում և Ուկրաինայում, ժողովրդավարության տարածման կարևորությունը ԱՄՆ-ի ազգային շահերի պաշտպանության համատեքստում[2]: Նույն գաղափարներն էին շեշտվում նաև 1996 թ. փետրվարին ընդունված ռազմավարությունում[3]:

ԱՄՆ-ի պատկերացումների համաձայն՝ նորանկախ հանրապետությունների ժողովրդավարացումը լավագույն միջոցն էր վերջիններիս արտաքին քաղաքականությունը հնարավորինս ԱՄՆ-ի շահերին համահունչ դարձնելու համար: Միևնույն ժամանակ, այս ռազմավարությունը հենվում էր «ժողովրդավարական խաղաղության» տեսության վրա, որի համաձայն՝ ժողովրդավարական պետությունները սովորաբար իրար դեմ չեն պատերազմում, և լիբերալ ժողովրդավարության տարածումը կնպաստի նաև կայունության հաստատմանը: «Լիբերալ հեգեմոնիայի» ռազմավարության գործարկումը համընկավ միաբևեռ աշխարհի սկզբնավորման հետ, որը մի շարք ամերիկացի վերլուծա-

---

[1] Տե՛ս Douglas Brinkley, Democratic Enlargement: The Clinton Doctrine, Foreign Policy, No 106 (Spring, 1997), pp.110-127.

[2] Տե՛ս A National Security Strategy of Engagement and Enlargement, February 1995, https://www.airforcemag.com/PDF/DocumentFile/Documents/2009/nss1995_020195.pdf

[3] Տե՛ս A National Security Strategy of Engagement and Enlargement, February 1996, https://www.hsdl.org/?view&did=444939

բաններ անվանում էին «միաբևեռ պահ»։ Այն ենթադրում էր ԱՄՆ-ի անվերապահ գերիշխանություն ամբողջ աշխարհում, ինչը հնարավորություն էր տալիս ԱՄՆ-ին իրականացնելու բոլոր նպատակներն առանց որևէ լուրջ դիմադրության[4]։

Միևնույն ժամանակ նորանկախ հանրապետություններին աջակցություն ցուցաբերելը ԱՄՆ-ն դիտարկում էր որպես հետխորհրդային տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության հնարավոր վերականգնումը կանխող արդյունավետ միջոց։ Թեև 1990-ական թվականների առաջին կեսին ռուս-ամերիկյան հարաբերություններն ինտենսիվ զարգանում էին, սակայն Ռուսաստանն արդեն սկսել էր քայլեր ձեռնարկել հետխորհրդային տարածաշրջանում իր ազդեցությունը հաստատելու ուղղությամբ։ Այս համատեքստում նախկին խորհրդային հանրապետությունների հաստատութենական կարողությունների զարգացումը համարվում էր կարևոր միջոց վերջիններիս անկախությունը Ռուսաստանից ապահովելու համար։

Հարավային Կովկասում ևս ԱՄՆ-ն հետամուտ էր այս ռազմավարության իրականացմանը։ Աջակցություն ժողովրդավարական բարեփոխումներին, պետական ինստիտուտների կայացում և պետության կարողությունների ամրապնդում. սրանք էին Հարավային Կովկասում ԱՄՆ-ի հիմնական նպատակները։ 1990-ական թվականների առաջին կեսը Հարավային Կովկասում լեցուն էր հակամարտություններով (ռազմական գործողություններ Աբխազիայում, Հարավային Օսիայում, Արցախում)։ Այս տարիներին ԱՄՆ-ի քաղաքականությունը հիմնականում ուղղված էր հումանիտար օգնության տրամադրմանը և հակամարտությունների կարգավորմանը կամ առնվազն սառեցմանը։

Միևնույն ժամանակ, 1991 թ. սկսած տարածաշրջանում ԱՄՆ-ի աշխարհաքաղաքականության համար էական էր էներգետիկ գործոնը։ ԱՄՆ-ն շահագրգռված էր Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսների արտահանման նոր ուղղությունների գործարկմամբ, որոնք կշրջանցեին Ռուսաստանը։ Դա մի կողմից նպաստելու էր նորանկախ հանրապետությունների զարգացմանը և Ռուսաստանից կախվածության նվազմանը, մյուս կողմից կարող էր թուլացնել Եվրոպայի էներգետիկ կախվածությունը ռուսական նավթից և գազից։ Պատահական չէ, որ ԱՄՆ-ն էական դերակատարություն էր ստանձնել 1994 թ. սեպտեմբերի 20-ին Ադրբեջանի և միջազգային նավթային ընկերությունների միջև «դարի համաձայնագրի» ստորագրման գործընթացում[5]։

Սկսած 1995 թ՝ ԱՄՆ-ն ակտիվորեն ներգրավված էր կասպյան ավազանի էներգետիկ ռեսուրսների արդյունահանման և արտահանման

---

[4] Charles Krauthammer, “The Unipolar Moment”, Foreign Affairs, America and the World, 1990/91 Vol. 70, N 1.

[5] «Դարի պայմանագրի» մասին ավելի մանրամասն տե՛ս The contract of the century – a national strategy for success, https://www.bp.com/en_az/azerbaijan/home/who-we-are/operationsprojects/acg2/the-contract-of-the-century---a-national-strategy-for-success.html

գործընթացում: ԱՄՆ-ի համար առաջնային նշանակություն ուներ նաև արտահանման ուղիների դիվերսիֆիկացումը նոր նավթամուղների և գազամուղների կառուցման միջոցով: ԱՄՆ-ի գնահատմամբ՝ այլընտրանքային խողովակաշարերի առկայությունն էականորեն նվազեցնում էր որևէ պետության հնարավորությունը՝ դրանք որպես ճնշման լծակ օգտագործելու: ԱՄՆ-ը զգալի մասնակցություն է ունեցել Բաքու - Թբիլիսի - Ջեյհան և Բաքու - Սուպսա նավթամուղների կառուցմանը՝ տրամադրելով տեխնիկական, իրավական և այլ օժանդակություն և նպաստել է 1999 թ. նոյեմբերի 18-ին Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի միջև Բաքու - Թբիլիսի - Ջեյհան նավթամուղի կառուցման վերաբերյալ միջկառավարական համաձայնագրի ստորագրմանը: Տարածաշրջանում ԱՄՆ-ի աճող էներգետիկ հետաքրքրությունների մասին էր վկայում նաև 1998 թ. հուլիսին Կասպյան ավազանի էներգետիկ դիվանագիտության հարցերով ԱՄՆ-ի նախագահի և պետքարտուղարի օգնականի պաշտոնի հիմնումը[6]: Այս պաշտոնում նշանակվեց Ռիչարդ Մորնինգսթարը, որը հետագայում՝ 2009-2012 թթ., զբաղեցնում էր եվրասիական էներգետիկ հարցերով նախագահ Օբամայի հատուկ բանագնացի, իսկ 2012 թ. մինչև 2015 թ. Սկիզբը՝ Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպանի պաշտոնը՝ ակտիվորեն աջակցելով «Հարավային գազային միջանցք» նախագծի իրականացմանը:

1994-1997 Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպան Ռիչարդ Կոզլարիչը 2019 թ. հրապարակած իր հոդվածում նշում է, որ 1994 թ. հստակ չէր՝ արդյոք Ադրբեջանի նավթային պաշարները բավարար են կոմերցիոն տեսակետից շահավետ գործունեություն ծավալելու համար, ուստի այս համատեքստում ԱՄՆ-ի աջակցությունը «դարի պայմանագրին» անհրաժեշտ էր Ադրբեջանին քաղաքական և տնտեսական զարգացման հույս տալու առումով: Նախկին դեսպանը նշում է, որ ԱՄՆ-ի այս ռազմավարությունն արդարացված էր, քանի որ այն Ադրբեջանին հնարավորություն էր տալիս ապահովելու իր ինքնիշխանություն ու բարեկեցությունը և միևնույն ժամանակ աջակցում էր տարածաշրջանում ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերին: Հետաքրքիր են նաև Կոզլարիչի բացահայտումներն այն մասին, որ «Բրիթիշ Փեթրոլիում» ընկերությունը նախապատվությունը տվել է Ադրբեջան - Ռուսաստան, իսկ այնուհետև Ադրբեջան - Իրան երթուղիներին, և միայն ԱՄՆ-ի ակտիվ միջամտությամբ է հնարավոր եղել ապահովել Ադրբեջան - Վրաստան - Թուրքիա երթուղու ընտրությունը[7]:

Ադրբեջանից նավի և գազի արտահանման գործընթացում ԱՄՆ-ի ակտիվ ներգրավման մասին է վկայում նաև 2015 թ. փետրվարից 2018

---

[6] U.S.-Caspian Energy Policy: Promoting Sovereignty and Prosperity, https://clintonwhitehouse5.archives.gov/textonly/WH/EOP/NSC/html/nsc-14.html

[7] Տե՛ս America and Azerbaijan: Five Reflections on the Contract of the Century, https://www.the-american-interest.com/2019/10/03/america-and-azerbaijan-five-reflections-on-the-contract-of-the-century/

թ. մարտ ամիսներն Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպան Ռոբերտ Սեկուտան, որը 2011 թ. - ից աշխատում էր ԱՄՆ պետքարտուղարության էներգետիկ ռեսուրսների բյուրոյում: Սեկուտան ևս նշում է, որ էներգետիկ ոլորտում Ադրբեջանին աջակցելու ԱՄՆ-ի հիմնական նպատակը տարածաշրջանում Ռուսաստանի և Իրանի ազդեցության ու Եվրոպայի՝ Ռուսաստանից ունեցած էներգետիկ կախվածության թուլացումն էր[8]: Սեկուտան նաև շեշտում է Ադրբեջան - Վրաստան -Թուրքիա համագործակցության ձևավորման հարցում ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական հետաքրքրությունը:

«Հարավային գազային միջանցք» նախագիծն ու ԱՄՆ-ի քաղաքականությունը

21-րդ դարի առաջին տասնամյակում ԱՄՆ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասում շարունակում էր հենված մնալ ռազմավարական նույն նպատակների վրա. նպաստել տարածաշրջանային պետությունների կարողությունների զարգացմանը և հնարավորինս նվազեցնել տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության վերականգնման հավանականությունը: Այս նպատակներին հասնելու միջոցները մնում էին նույնը՝ աջակցություն քաղաքական և տնտեսական բարեփոխումների օրակարգին և օժանդակություն տարածաշրջանի պետություններում քաղաքացիական ակտիվ հասարակության ձևավորմանը, որը ԱՄՆ-ն դիտում էր որպես ռեսուրս՝ սեփական արտաքին քաղաքական նպատակներն առաջ մղելու համար: Ամերիկյան օժանդակության տրամադրման հիմնական խողովակներն էին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը և տարբեր հիմնադրամները, որոնցից կարելի է առանձնացնել Ժողովրդավարության ազգային հիմնադրամը (National Endowment for Democracy): Հարավային Կովկասում ԱՄՆ-ի ներգրավման նոր փուլը սկսվեց 2003 թ. նոյեմբերին Վրաստանում «Վարդերի հեղափոխությունից» և 2004 թ. հունվարին Միխեիլ Սաակաշվիլու՝ Վրաստանի նախագահ ընտրվելուց հետո: Սաակաշվիլին ի սկզբանե հայտարարեց Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրացիայի մասին՝ ՆԱՏՕ-ին և Եվրամիությանն անդամակցությունը դիտարկելով որպես պետության արտաքին քաղաքականության առաջնահերթություն: Վրաստանում «Վարդերի հեղափոխությունը» համընկավ ԱՄՆ-ում Նախագահ Ջորջ Բուշի պաշտոնավարման երկրորդ ժամկետին (2005 թ. հունվար – 2009 թ. հունվար), որի ընթացքում աշխարհում, այդ թվում՝ հետխորհրդային տարածաշրջանում, ժողովրդավարության տարածումը դարձավ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնական ուղենիշը[9]: Նախագահ Բուշի երդմնակալության երկ-

---

[8] Տե՛ս 25 Years After the "Contract of the Century": The Implications for Caspian Energy, https://www.caspianpolicy.org/25-years-after-the-contract-of-the-century-the-implications-for-caspian-energy/

[9] Տե՛ս President Bush's Second Inaugural Address, https://www.npr.org/templates/story/story.php?storyId=4460172, Thomas Carothers, US Democracy Promotion during and after

որդ արարողությանը նախորդել էր «Նարնջագույն հեղափոխությունը» Ուկրաինայում, որի ընթացքում ԱՄՆ-ն աջակցում էր նախագահի ընդդիմադիր թեկնածու Վիկտոր Յուշչենկոյին՝ օժանդակելով Ուկրաինայի եվրաատլանտյան ինտեգրման ցանկությանը[10]: 2004 թ. Սկսած՝ ԱՄՆ-ն ակտիվորեն աջակցում էր Վրաստանին: 2005 թ. մայիսին Հարավային Կովկասի պատմության մեջ առաջին և առայժմ վերջին անգամ ԱՄՆ գործող նախագահն այցելեց տարածաշրջան՝ Վրաստանում հանդիպելով երկրի բարձրագույն ղեկավարության հետ և հանդես գալով հրապարակային ելույթով[11]: Էական էր ԱՄՆ-ի դերը նաև ռուսական վերջին երկու ռազմակայանները Վրաստանի տարածքից հանելու գործում՝ նպաստելով այս խնդրում Վրաստանի և Ռուսաստանի միջև համապատասխան հայտարարություն ստորագրելուն[12]:

Տարածաշրջանի պետությունների կարողությունների զարգացման գործում ԱՄՆ քաղաքականության կարևոր գործիքներից մեկը շարունակում էին մնալ էներգետիկ դիվանագիտությունը և կասպյան տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսների՝ միջազգային շուկաներ արտահանումը:

2001 թ. հունվարին նախագահ Բուշի երդմնակալության արարողությունից կարճ ժամանակ անց նրա որոշմամբ ստեղծվեց «Պետական էներգետիկ քաղաքականության մշակման խումբ»՝ փոխնախագահ Դիկ Չեյնիի գլխավորությամբ: Արդեն 2001 թ. մայիսին խումբը նախագահին ներկայացրեց «Պետական էներգետիկ քաղաքականություն» 170 էջանոց զեկույցը: Ի թիվս այլոց՝ զեկույցը ԱՄՆ-ի նախագահին առաջարկում էր աջակցել Բաքու – Թբիլիսի – Ջեյհան նավթամուղի կառուցմանը, նպաստավոր պայմաններ ստեղծել ղազախական նավթը այդ երթուղով արտահանելու համար, օժանդակել ադրբեջանական Շահ-Դենիզ գազային հանքավայրից ադրբեջանական գազի՝ Վրաստանի տարածքով Թուրքիա արտահանմանը, և առաջարկել Թուրքիային ու Հունաստանին միավորել իրենց գազամուղները, ինչը հնարավորություն կտա ադրբեջանական գազը Վրաստանի և Թուրքիայի տարածքով արտահանելու եվրոպական շուկաներ[13]: Այս վերջին առաջարկով առաջին անգամ շրջանառության մեջ էր դրվում «Հարավային գազային միջանցք» գաղափարը: Զեկույցը կազմելու ընթացքում արդեն ԱՄՆ-ն ակտիվ քայլեր էր ձեռնարկում ադրբեջանական գազը միջազ-

Bush, Carnegie Endowment for International Peace, 2007, https://carnegieendowment.org/files/democracy_promotion_after_bush_final.pdf

[10] Տե՛ս Statement on Upcoming Ukrainian Elections, https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2004/11/20041118-2.html, CRS Report for Congress, Ukraine's political crisis and U.S Policy Issues, February 1, 2005, https://sgp.fas.org/crs/row/RL32691.pdf

[11] Տե՛ս Bush: Georgia 'beacon of liberty', https://edition.cnn.com/2005/WORLD/europe/05/10/bush.tuesday/

[12] Տե՛ս Russia's Troop Withdrawal From Georgia: The Start of a New Friendship?, https://eurasianet.org/russias-troop-withdrawal-from-georgia-the-start-of-a-new-friendship

[13] Տե՛ս National Energy Policy, Report of the National Energy Policy development Group, May 2001, http://www.wtrg.com/EnergyReport/National-Energy-Policy.pdf

գային շուկաներ արտահանելու ուղղությամբ: ԱՄՆ-ի աջակցությամբ 2001 թ. մարտի 12-ին Անկարայում Ադրբեջանի և Թուրքիայի նախագահները ստորագրեցին միջկառավարական համաձայնագիր Վրաստանի տարածքով տարեկան մինչև 6.6 միլիարդ խորանարդ մետր ադրբեջանական բնական գազ Թուրքիա արտահանելու մասին:

Համաձայնագիրը նաև նախատեսում էր Թուրքիայի տարածքով ադրբեջանական գազի արտահանում երրորդ երկրներ[14]:

Տարածաշրջանում ԱՄՆ-ի էներգետիկ ռազմավարության հաջորդ ձեռքբերումն արձանագրվեց 2005 թ. մայիսին: Բաքվում տեղի ունեցավ Բաքու – Թբիլիսի – Ջեյհան նավթամուղի նախնական գործարկման արարողությունը, որին մասնակցում էին Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի և Ղազախստանի նախագահները[15]: Միջոցառմանը ներկա էր նաև ԱՄՆ-ի էներգետիկայի նախարար Սամուել Բոդմանը: Նա հայտարարեց, որ այս նավթամուղը կարևոր նշանակություն ունի ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ էներգետիկ անվտանգության ապահովման համատեքստում[16]: Ամերիկյան մի շարք վերլուծաբաններ հստակ նշում էին այս նավթամուղի աշխարհաքաղաքական նշանակությունը՝ շեշտելով, որ այն էական դեր կխաղա ինտենսիվացնելու Վրաստանի և Ադրբեջանի հարաբերությունները Արևմուտքի հետ, միևնույն ժամանակ հստակ ուղերձ հղելով Ռուսաստանին, որ Հարավային Կովկասում այն կարող է ունենալ որոշակի ազդեցություն, սակայն չի հավակնի գերիշխող դերի[17]: Նավթամուղի պաշտոնական բացման արարողությունը տեղի ունեցավ 2006 թ. հուլիսին թուրքական Ջեյհան նավահանգստում, որին մասնակցում էր նաև ԱՄՆ-ի Էներգետիկայի փոխնախարար Քլեյ Սելը: Վերջինս հայտարարեց, որ 3.9 միլիարդ դոլարանոց նավթամուղը ռազմավարական և տնտեսական կարևոր նշանակություն կունենա մասնակից պետությունների համար[18]:

Միջազգային շուկաներ ադրբեջանական նավթի արտահանման նոր երթուղիներին զուգահեռ՝ ԱՄՆ-ի կառավարությունը զգալիորեն աջակցում էր նաև ադրբեջանական գազի արտահանմանը: Գազի արտահանման վերաբերյալ թուրք-ադրբեջանական 2001 թ. համաձայնագրի ստորագրումից հետո՝ 2004 թ., սկսվեց Բաքու - Թբիլիսի - Էրզրում գազամուղի շինարարությունը, որը հայտնի է նաև «Հարավկով-

---

[14] Տե՛ս Agreement between the republic of Turkey and the Azerbaijan republic concerning the delivery of Azerbaijan natural gas to the republic of Turkey, https://www.bp.com/content/dam/bp/country-sites/en_az/azerbaijan/home/pdfs/legalagreements/gov-agreements/sha_eng_intergov_azerbaijan_turkey_intergovernmental_agreement.pdf

[15] Տե՛ս Caspian-Mediterranean Oil Pipeline Launched in Baku, https://www.rferl.org/a/1058992.html

[16] Տե՛ս US Energy Secretary Bodman Hails Opening of the Baku-Tbilisi-Ceyhan Pipeline, https://www.energy.gov/articles/us-energy-secretary-bodman-hails-opening-baku-tbilisi-ceyhan-pipeline

[17] Տե՛ս The Baku – Tbilisi – Ceyhan pipeline: Oil window to the west, edited by S. Frederick Starr and Svante E. Cornell, Central Asia - Caucasus Institute, 2005, https://www.silkroadstudies.org/resources/pdf/Monographs/2005_01_MONO_Starr-Cornell_BTC-Pipeline.pdf

[18] Տե՛ս Ceyhan Ceremony Inaugurates BTC Pipeline, https://www.rferl.org/a/1069835.html

կասյան խողովակաշար» անվանումով: Գազամուղի շինարարությունն ավարտվեց 2006 թ., նույն թվականին ադրբեջանական գազը սկսեցին արտահանել Վրաստան, իսկ 2007 թ. Հուլիսից՝ Թուրքիա[19]:

Միևնույն ժամանակ 2000-ական թվականների կեսերից Հարավային Կովկասում ԱՄՆ-ի քաղաքականության վրա սկսեցին էական ազդեցություն ունենալ ռուս-ամերիկյան հարաբերությունները: Ռուսաստանը ակնհայտ դժգոհությամբ էր ընդունում հետխորհրդային տարածաշրջանում տեղի ունեցող «գունավոր հեղափոխությունները» (2003 թ.՝ Վրաստան, 2004 թ.՝ Ուկրաինա, 2005 թ.՝ Ղրղզստան:) 2000 թ. Վլադիմիր Պուտինի նախագահ ընտրվելուց հետո Ռուսաստանը քայլեր էր ձեռնարկում ինչպես երկրի ներսում կայունության վերականգնման, այնպես էլ հետխորհրդային տարածաշրջանում սեփական դիրքերի ամրապնդման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, Ռուսաստանում գնալով ավելի էին ուժեղանում նոր բազմաբևեռ աշխարհի ձևավորման կողմնակիցները, որոնք խստորեն քննադատում էին 1991 թ. ձևավորված միաբևեռ աշխարհակարգը: Ռուսաստանի համար խիստ մտահոգիչ էր նաև ՆԱՏՕ-ի ընդլայնման գործընթացը: 2004 թ. բալթյան երեք հանրապետությունների՝ ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո ակտիվորեն քննարկվում էր Ուկրաինայի և Վրաստանի անդամակցության հնարավորությունը: Այս համատեքստում Ռուսաստանի ավելի կոշտ արտաքին քաղաքականության առաջին ազդանշանը 2007 թ. փետրվարին նախագահ Պուտինի ելույթն էր Մյունխենի անվտանգության խորհրդաժողովում[20]: 2008 թ. ապրիլին Բուխարեստում կայացած ՆԱՏՕ-ի գագաթնաժողովը որոշեց, որ Վրաստանը և Ուկրաինային կդառնան ՆԱՏՕ-ի անդամ, թեև Գերմանիայի և Ֆրանսիայի դիմադրության պատճառով այս պետություններին չտրամադրվեց «Անդամակցության գործողությունների ծրագիր» (Membership Action Plan):[21]

2008 թ. օգոստոսի ռուս – վրացական պատերազմը էլ ավելի սրեց ԱՄՆ – Ռուսաստան հարաբերությունները: Այս համատեքստում հետխորհրդային պետություններին ցուցաբերվող ամերիկյան աջակցությունը, այդ թվում էներգետիկ ռեսուրսների արտահանման հարցում, գնալով ավելի էր կարևորվում ԱՄՆ-ի համար որպես տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության աճը կանխող էական գործոն: 2009 թ. հունվարին Ռուսաստանի և Ուկրաինայի միջև սկսված գազային ճգնաժամը, որի հետևանքով հունվարի 7-20-ը դադարեցվեց Ուկրաինայի տարածքով եվրոպական սպառողներին ռուսական գազի մատակարարումը, էլ ավելի կարևորեցին Եվրոպա բնական գազի մատակա-

[19] Տե՛ս South Caucasus Pipeline (SCP), Georgia, Turkey, Azerbaijan, https://www.hydrocarbons-technology.com/projects/south-caucasus-pipeline-scp-georgia-turkey-azerbaijan/

[20] Տե՛ս Выступление и дискуссия на Мюнхенской конференции по вопросам политики безопасности, http://kremlin.ru/events/president/transcripts/24034

[21] Տե՛ս Bucharest Summit Declaration, https://www.nato.int/cps/en/natolive/official_texts_8443.htm

բարման այլընտրանքային երթուղիների ձևավորումն ու ռուսական գազից Եվրամիության կախվածության նվազումը[22]:

ԱՄՆ քաղաքական վերնախավը համոզված էր, որ Ռուսաստանն օգտագործում է իր էներգետիկ ռեսուրսները որպես զենք Եվրամիության նկատմամբ ճնշումներ բանեցնելու և սեփական աշխարհաքաղաքական շահերն առաջ մղելու նպատակով:

Չնայած 2009 թ. գարնանը Օբամայի վարչակազմի կողմից սկսված ռուս-ամերիկյան «վերաբեռնման քաղաքականությանը»,[23] որի արդյունքում ԱՄՆ-ն աջակցեց Ռուսաստանի անդամակցությանն Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, կողմերը 2010 թ. ստորագրեցին ռազմավարական հարձակողական սպառազինությունների կրճատման մասին նոր համաձայնագիր[24], իսկ Ռուսաստանը 2010 թ. հունիսին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում կողմ քվեարկեց Իրանի դեմ պատժամիջոցներ սահմանող բանաձևին[25], ԱՄՆ-ը շարունակում էր աջակցել կասպյան տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսների՝ եվրոպական շուկաներ արտահանման գործընթացին: Այս համատեքստում էական նշանակություն էր ձեռք բերել ադրբեջանական գազի հավելյալ պաշարները Եվրոպա արտահանելու երթուղու խնդիրը: Ադրբեջանական գազի նկատմամբ հետաքրքրության աճը պայմանավորված էր նաև 2000-ականների սկզբին Եվրամիության տարածքում բնական գազի արդյունահանման ծավալների նվազմամբ, ինչպես նաև որպես էլեկտրաէներգիայի ստացման աղբյուր ածուխից հրաժարվելու և դրա փոխարեն բնական գազ օգտագործելու տրամադրություններով, որոնք մասամբ պայմանավորված էին նաև շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրներով:

ԵՄ էներգետիկ անվտանգության նկատմամբ ԱՄՆ- ի հետաքրքրության աճի մասին է վկայում 2009 թ. ԱՄՆ – ԵՄ էներգետիկ խորհրդի ստեղծումը այս ոլորտում երկու կողմերի միջև ռազմավարական համագործակցություն ծավալելու նպատակով[26]:

2014 թ. ուկրաինական ճգնաժամի մեկնարկից հետո ԵՄ-ից Ռուսաստանի էներգետիկ կախվածության նվազումը ԱՄՆ-ի համար ավելի կարևորվեց: Արդեն 2014 թ. ապրիլի 2-ին Բրյուսելում այս հարցը քննարկվեց ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերրիի մասնակցությամբ

---

[22] Տե՛ս The Russo-Ukrainian gas dispute of January 2009: a comprehensive assessment, https://www.oxfordenergy.org/wpcms/wp-content/uploads/2010/11/NG27-TheRussoUkrainianGasDisputeofJanuary2009AComprehensiveAssessment-JonathanSternSimonPiraniKatjaYafimava-2009.pdf

[23] Տե՛ս U.S.-Russia Relations: "Reset" Fact Sheet, https://obamawhitehouse.archives.gov/the- press-office/us-russia-relations-reset-fact-sheet

[24] Տե՛ս The New START Treaty and Protocol, https://obamawhitehouse.archives.gov/blog/2010/04/08/new-start-treaty-and-protocol

[25] Տե՛ս Security Council Imposes Additional Sanctions on Iran, Voting 12 in Favour to 2 Against, with 1 Abstention, https://www.un.org/press/en/2010/sc9948.doc.htm

[26] Տե՛ս U.S.-EU Energy Council, https://www.energy.gov/ia/international-affairs-initiatives/us-eu-energy-council

կայացած հանդիպման ժամանակ[27]: Ռուսաստանից ԵՄ էներգետիկ կախվածության նվազման և էներգետիկ աղբյուրների դիվերսիֆիկացիայի թեման էական տեղ էր զբաղեցնում նաև 2014 թ. դեկտեմբերին կայացած ԱՄՆ – ԵՄ էներգետիկ խորհրդի հերթական նիստում[28]: Նիստի վերջում ընդունված համատեղ հայտարարության մեջ հատուկ ընդգծվում էր «Հարավային գազային միջանցքի» կարևորությունը[29]: Այս զարգացումներն էլ ավելի մեծացրին Կասպից ծովի ավազանից Ռուսաստանին շրջանցելով ԵՄ գազի մատակարարման նոր ուղիների ձևավորման և այս հարցում ԱՄՆ կողմից ցուցաբերվող աջակցության նշանակությունը:

Հարկ է նշել, որ 2000 - ականների սկզբին Եվրամիությունը հիմնականում գազ էր ստանում այսպես կոչված երեք գազային միջանցքներից՝ «արևելյան գազային միջանցք՝ Ռուսաստան», «հյուսիսային գազային միջանցք՝ Նորվեգիա», «արևմտյան գազային միջանցք՝ Հյուսիսային Աֆրիկա»: Հաշվի առնելով բնական գազի աճող պահանջները՝ Եվրամիությունն առաջ քաշեց «Հարավային գազային միջանցքի» գաղափարը, որը նախատեսում էր գազի ներմուծում Կասպյան ավազանից և Մերձավոր Արևելքից դեպի Հարավարևելյան Եվրոպա, իսկ այնտեղից դեպի Ավստրիա և Գերմանիա: Առաջին անգամ Հարավային գազային միջանցքի մասին նշվում էր 2006 թ. սեպտեմբերին ընդունված Եվրոպական խորհրդարանի և Եվրամիության խորհրդի «Տրանսեվրոպական էներգետիկ ցանցերի ուղենիշները սահմանելու մասին» որոշմամբ: Եվրամիությունը որպես հատուկ հետաքրքրություն ներկայացնող նոր գազամուղների ցանկում ֆիքսում էր Կասպից ծովի երկրներ – Մերձավոր Արևելք – ԵՄ գազամուղները, այդ թվում Թուրքիա – Հունաստան – Իտալիա և Թուրքիա – Ավստրիա գազամուղի կառուցումը[30]:

Բաքու – Թբիլիսի – Էրզրում գազամուղի գործարկումից և «Հարավային գազային միջանցքի» գաղափարը շրջանառության մեջ դնելուց հետո ակտիվորեն սկսեց քննարկվել ադրբեջանական գազը Եվրոպա տեղափոխող գազամուղի երթուղու հարցը: 2000 – ական թվականների վերջին շրջանառության մեջ դրվեց «Նաբուկկո» գազամուղի գաղափարը, որը նախատեսում էր Կասպից ծովի ավազանից Թուրքիայի, Բուլղարիայի, Ռումինիայի և Հունգարիայի տարածքով տարեկան 31 միլիարդ խորանարդ մետր գազ հասցնել Ավստրիա: Որպես աղբյուր դի-

---

[27] Տե՛ս US pushes for EU energy diversification, https://www.politico.eu/article/us-pushes-for-eu-energy-diversification/

[28] Տե՛ս EU-US Energy Council discusses energy diversification and climate change, https://ec.europa.eu/energy/news/eu-us-energy-council-discusses-energy-diversification-and-climate-change_en

[29] Տե՛ս Joint Statement EU-US Energy Council, https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP_14_2341

[30] Տե՛ս DECISION No 1364/2006/EC of the European Parliament And Of The Council of 6 September 2006, laying down guidelines for trans-European energy networks and repealing Decision 96/391/EC and Decision No 1229/2003/EC, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32006D1364&from=EN

տարկվում էին Իրանի, Ադրբեջանի և Թուրքմենստանի գազի պաշարները: 2009 թ. մայիսի 8-ին Պրահայում Ադրբեջանի, Թուրքիայի և Եվրամիության ներկայացուցիչները հռչակագիր ստորագրեցին «Նաբուկկո» գազամուղի կառուցման մասին[31]: 2011 թ. հունվարի 13-ին Բրյուսելում Ադրբեջանը և Եվրահանձնաժողովը հռչակագիր ստորագրեցին Ադրբեջանից Եվրամիություն գազի արտահանման մասին: Եվրամիության գնահատականի համաձայն՝ այս հռչակագիրը կենսական նշանակություն ուներ «Հարավային գազային միջանցքի» գործարկման համար: Հռչակագրում նշվում էր, որ առաջիկայում կողմերը պետք է հստակեցնեն գազի արտահանման վերջնական երթուղին[32]: Չնայած «-Նաբուկկո» գազամուղի վերաբերյալ քննարկումներին՝ այս ծրագիրն այդպես էլ իրականություն չդարձավ: 2010 թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից Իրանի դեմ ընդունված նոր պատժամիջոցները բացառում էին Իրանի մասնակցությունն այս ծրագրին: Ինչ վերաբերում է թուրքմենական գազին, ապա անդրկասպյան գազամուղի կառուցման գաղափարը ևս հանդիպում էր անհաղթահարելի խոչընդոտների: Կասպից ծովի իրավական կարգավիճակի վերաբերյալ ափամերձ պետությունների միջև հակասությունները անհնարին էին դարձնում այս նախագծի իրագործումը: Իր հերթին Թուրքմենստանը գազի արտահանման համաձայնագրեր էր ստորագրել Չինաստանի հետ: 2009 թ. դեկտեմբերին գործարկվեց Կենտրոնական Ասիա – Չինաստան գազամուղի առաջին խողովակաշարը[33], իսկ 2014 թ. Հունիսին՝ գործարկվեց երրորդը՝ նախագծի ընդհանուր թողունակությունը հասցնելով տարեկան 55 միլիարդ խորանարդ մետրի[34]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միայն ադրբեջանական գազը բավարար չէր ամբողջությամբ գործարկելու «Նաբուկկո» գազամուղը՝ 2013 թ. ամռանը որոշում ընդունվեց հրաժարվել այդ նախագծից և դրա փոխարեն ադրբեջանական գազը Եվրոպա հասցնել տրանսանատոլիական և տրանսադրիատիկ գազամուղներով[35]: 2013 թ. դեկտեմբերի 17-ին ստորագրվեց ադրբեջանական Շահ Դենիզ 2 գազի հանքավարի վերջնական ներդրումային նախագիծը, որը նախատեսում էր տարեկան 6 միլիարդ խորանարդ մետր գազ մատակարարել Թուրքիա և ևս 10 միլիարդ խորանարդ մետր՝ Եվրոպա, մասնավորապես՝ Իտալիա, Հունաստան, Բուլղարիա: Նախագծի ընդհանուր արժեքը, ներառյալ նոր խողովակա-

---

[31] Տե՛ս EU signs Nabucco deal with Azerbaijan and Turkey, https://www.politico.eu/article/eu-signs-nabucco-deal-with-azerbaijan-and-turkey/

[32] Տե՛ս Commission and Azerbaijan sign strategic gas deal, https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP_11_30

[33] Տե՛ս New Gas Pipeline From Central Asia Feeds China, https://www.nytimes.com/2009/12/15/world/asia/15pipeline.html

[34] Տե՛ս Third Line Of Central Asia-China Gas Pipeline Launched, https://www.rferl.org/a/third-line-of-central-asia-china-gas-pipeline-launched/25407101.html

[35] Տե՛ս Nabucco project fails, placed by Trans Adriatic Pipeline project, https://www.aa.com.tr/en/turkey/nabucco-project-fails-placed-by-trans-adriatic-pipeline-project/235841

շարերի կառուցումը, գնահատվում էր մոտ 40 միլիարդ դոլար:[36]

Միացյալ Նահանգները տրանսանատոլիական և տրանսադրիատիկ գազամուղների կառուցման ընթացքում ակտիվորեն հանդես էր գալիս «Հարավային գազային միջանցք» նախագծի պաշտպանությամբ: Միացյալ Նահանգները մասնակցում էր Հարավային գազային միջանցքի խորհրդատվական խորհրդի աշխատանքներին[37]: 2018 թ. դեկտեմբերի 11-ին Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատն ընդունեց 1035-րդ բանաձևը, որը կոչ էր անում եվրոպական կառավարություններին մերժել «Հյուսիսային հոսք 2» նախագիծը և վերահաստատում էր ԱՄՆ-ի աջակցությունը «Հարավային գազային միջանցք» նախագծին[38]:

2019 թ. նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ տրանսանատոլիական գազամուղի գործարկման պաշտոնական արարողությունը, որը Թուրքիայի տարածքով հասնում է մինչև Թուրքիա – Հունաստան սահման: Շուրջ 6.5 միլիարդ դոլար արժողությամբ գազամուղն ունի տարեկան 16 միլիարդ խորանարդ մետր թողունակություն, սակայն հավելյալ ներդրումների դեպքում դա կարող է հասնել մինչև 31 միլիարդի[39]: 2020 թ. վերջին գործարկվեց տրանսադրիատիկ գազամուղը[40], որը 2021 թ. հունվարի 1-ից տարեկան 10 միլիարդ խորանարդ մետր ադրբեջանական գազ Հունաստանի, Ալբանիայի տարածքով և Ադրիատիկ ծովի հատակով հասցնում է եվրոպական շուկաներ[41]:

2020 թ. նոյեմբերին ԱՄՆ-ում կայացած նախագահական ընտրություններում Ջո Բայդենի հաղթանակից հետո ԱՄՆ-ի նոր վարչակազմը շարունակում է ակտիվորեն աջակցել «Հարավային գազային միջանցք» նախագծին: 2021 թ. սեպտեմբերի 10-ին ելույթ ունենալով Բաքվում կայացած «տարածաշրջանային էներգետիկ անվտանգության համաժողովում»՝ Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպան Լի Լիցենբերգերը հայտարարեց, որ ԱՄՆ-ն շարունակում է աջակցել «Հարավային գազային միջանցք» նախագծին, որը հնարավորություն է տալիս Ադրբեջանին էական դերակատարում ունենալ ԱՄՆ-ի դաշնակիցների և գործընկերների էներգետիկ անվտանգության ապահովման գործում[42]:

---

[36] Տե՛ս Shah Deniz II Final Investment Decision Announced in Baku, https://www.csis.org/analysis/shah-deniz-ii-final-investment-decision-announced-baku

[37] Տե՛ս Southern gas corridor Advisory council joint press statement, 12 February 2015, https://ec.europa.eu/energy/sites/default/files/documents/Southern%20Gas%20Corridor%20Advisory%20Council.pdf

[38] Տե՛ս H.Res.1035 - Expressing opposition to the completion of Nord Stream II, and for other purposes, https://www.congress.gov/bill/115th-congress/house-resolution/1035/text

[39] Տե՛ս Turkey and Azerbaijan mark completion of TANAP pipeline to take gas to Europe, https://www.reuters.com/article/us-turkey-energy-tanap-idUSKBN1Y40CP

[40] Տե՛ս Trans Adriatic Pipeline enters operational phase, https://ec.europa.eu/inea/en/news-events/newsroom/trans-adriatic-pipeline-enters-operational-phase

[41] Տե՛ս Rapid response: The Southern Gas Corridor opens today, https://www.atlanticcouncil.org/blogs/energysource/rapid-response-the-southern-gas-corridor-opens-today/

[42] Տե՛ս US Ambassador: Southern Gas Corridor places Azerbaijan in the forefront of energy security for many of our allies and partners, https://apa.az/en/xeber/foreign-news/us-ambassador-southern-gas-corridor-places-azerbaijan-in-the-forefront-of-energy-security-for-

Հարկ է ընդգծել, որ «Հարավային գազային միջանցքը» իր ներկա տեսքով չի կարող էական ազդեցություն ունենալ եվրոպական էներգետիկ շուկայի վրա: Առաջիկա տարիներին այս երթուղով Եվրամիության անդամ պետություններ կարող է արտահանվել տարեկան 10 միլիարդ խորանարդ մետր գազ, որը կազմում է ԵՄ-ի տարեկան միջին սպառման ընդամենը երկու տոկոսը: Տեխնիկապես հնարավոր է տրանսադրիատիկ գազամուղի թողունակությունը հասցնել տարեկան 20 միլիարդ և ավելի խորանարդ մետրի, սակայն Ադրբեջանը չունի այդ ծավալի գազ արտահանելու հնարավորություններ: 2018 թ. Ադրբեջանը արդյունահանել է մոտ 18 միլիարդ խորանարդ մետր գազ, և Շահ Դենիզ երկու հանքավայրից արդյունահանում է ևս 16 միլիարդ: Միևնույն ժամանակ Ադրբեջանի ներքին սպառումը տարեկան կազմում է շուրջ 10 միլիարդ խորանարդ մետր: Լավագույն դեպքում Ադրբեջանը կարող է արտահանել տարեկան մինչև 24 միլիարդ խորանարդ մետր գազ, սակայն դրա մի զգալի մասը սպառվում է Թուրքիայում և Վրաստանում, ինչը նշանակում է, որ Ադբեջանը սեփական ռեսուրսների հաշվին չի կարող տարեկան 20 միլիարդ խորանարդ մետր գազ արտահանել եվրոպական շուկաներ[43]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ 1991 թ. - ից ի վեր Հարավային Կովկասում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը Կասպից ծովի ավազանի էներգետիկ ռեսուրսների արտահանումն էր միջազգային շուկաներ: ԱՄՆ-ի ակտիվ ներգրավմամբ գործարկվեցին Բաքու – Թբիլիսի - Ջեյհան և Բաքու - Թբիլիսի - Էրզրում խողովակաշարերը: 2000 - ականներից սկսած ԱՄՆ-ը էական դերակատարություն է ունեցել «Հարավային գազային հոսք» միջանցքի գործարկման խնդրում՝ այն դիտարկելով Ռուսաստանից Եվրոպայի էներգետիկ կախվածության նվազեցման ռազմավարության համատեքստում: Միևնույն ժամանակ, վերջին տարիներին տեղի ունեցող էներգետիկ հեղափոխությունը և կլիմայի տաքացման դեմ պայքարը որոշակիորեն նվազեցրել են գազի և նավթի դերը համաշխարհային տնտեսությունում: Ադրբեջանի ունեցած գազի պաշարները բավարար չեն եվրոպական էներգետիկ շուկայում էական խաղացող դառնալու համար: Այնուամենայնիվ՝ գերտերությունների աստիճանաբար սրվող մրցակցության պայմաններում էներգետիկ գործոնը առնվազն առաջիկա տասնամյակի ընթացքում կշարունակի էական դեր խաղալ Հարավային Կովկասում ԱՄՆ-ի քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում:

---

many-of-our-allies-and-partners-357504

[43] Տե՛ս European Energy Security: Options for EU Natural Gas Diversification, Congressional Research Service, February 2020, https://crsreports.congress.gov/product/pdf/R/R42405

БЕНИАМИН ПОГОСЯН – ***Южный газовый коридор и политика США на Южном Кавказе.*** – В статье анализируется политика США на Южном Кавказе в контексте реализации проекта «Южный газовый коридор». После распада Советского Союза в 1991 году энергетическая геополитика была одним из ключевых столпов, определяющих региональную политику США на Южном Кавказе. Стратегической целью США было облегчить транспортировку каспийской нефти и газа на европейские рынки в обход России. США сыграли жизненно важную роль в содействии строительства нефтепровода Баку-Тбилиси-Джейхан и газопровода Баку-Тбилиси-Эрзурум. С середины 2000-х годов США приложили значительные усилия для запуска «Южного газового коридора», который предусматривал транспортировку азербайджанского газа на рынок Европы по Трансанатолийскому и Трансадриатическому газопроводам. Южный газовый коридор начал работу в конце декабря 2020 года и в конечном итоге обеспечит Италию, Болгарию и Грецию 10 млрд кубометров газа. Несмотря на то, что Азербайджан не обладает достаточными запасами газа, чтобы бросить вызов позициям «Газпрома» в Европе, США рассматривают проект Южного газового коридора как значительный вклад в создание альтернативных маршрутов транспортировки энергии в Европу.

Ключевые слова: *Южный Кавказ, Южный газовый коридор, США, ЕС, Азербайджан, Армения, Турция, Россия, геополитика, региональная безопасность, энергетическая стратеги*

BENYAMIN POGHOSYAN – ***The Southen Gas corridor and the US policy in the South Caucasus.*** – The article analyzes the US policy in the South Caucasus in the context of implementing the "Southern gas corridor" project. Since the collapse of the Soviet Union in 1991 the energy geopolitics has been one of the critical pillars shaping the US regional policy in the South Caucasus. The US strategic goal was to facilitate the transportation of Caspian oil and gas to the European markets circumventing Russia. The US played a vital role in fostering the construction of Baku - Tbilisi - Ceyhan oil and Baku - Tbilisi - Erzurum gas pipelines. Since the mid-2000s, the US has put significant efforts to launch the "Southern gas corridor," which envisaged the transportation of Azerbaijani gas to the European market through the Transanatolian and Trans-Adriatic gas pipelines. The southern gas corridor became operational in late December 2020 and would provide 10 billion cubic meters of gas to Italy, Bulgaria, and Greece annualy. Even though Azerbaijan does not possess sufficient gas reserves to challenge Gazprom positions in Europe, the US views the Southern gas corridor project as a significant contribution to the establishment of alternative energy transportation routes to Europe, perceiving this within the prism of evolving great power competition between the US, Russia, and China.

Key words: *South Caucasus, Southern gas corridor, the US, EU, Azerbaijan, Armenia, Turkey, Russia, geopolitics, regional security, energy strategy*